



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ


2023թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



- 2023թ. հոկտեմբեր ամսին համաշխարհային տնտեսությունում շարունակվել է ծառայությունների ոլորտի աճի դանդաղումը և արդյունաբերության ոլորտի անկումը:
- Հոկտեմբեր ամսին՝ ի համեմատ նախորդ ամսվա նվազել են էներգակիրների, մետաղների և պարենի գները:
- 2023թ. հոկտեմբեր ամսին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի արագացում:
- Հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 2023թ. առաջին անգամ ՀՀ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվել է, որի չափը կազմել է 0.4%-ով: Եվրոյի նկատմամբ դրամի վերջին չորս ամիսներին արձանագրված արժեզրկման տեմպի արագացում է տեղի ունեցել՝ կազմելով 7.3%-ով: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամը արժևորվել է 56.9%-ով:
- Հոկտեմբեր ամսին ՀՀ այցելած զբոսաշրջիկների քանակը շարունակում է աճել (26.2%-ով), սակայն դրամական փոխանցումների զուտ ներհոսքը նվազում է (59.6%-ով):
- Տնտեսական ակտիվության աճի տեմպը հոկտեմբերին կազմել է 6.0%՝ սեպտեմբերի համեմատ արագանալով 0.7 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության արդյունաբերության աճի տեմպի վերականգնմամբ և առևտրի աճի տեմպի արագացմամբ:
- Սեպտեմբեր ամսին գնաճը շարունակել է գտնվել 0-ին մոտ մակարդակում՝ կազմելով 0.1%, որի պայմաններում ԿԲ-ն սեպտեմբերին նվազեցրել է տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 9.75%-ի մակարդակում:
- Ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական զարգացումների համեմատ, ինչը դրսևորվում է ավանդների և վարկերի ծավալների համադրելի աճի տեմպերով:
- Հարկային եկամուտների աճի տեմպը շարունակում է բարձր լինել (15.0%-ով), թեպետ նկատելի են եղել դանդաղման որոշակի միտումներ:
- Պետական բյուջեի ծախսերը հունվար-հոկտեմբեր ամիսներին աճել են 14.3%-ով, որում կապիտալ ծախսերի աճի տեմպն առաջանցիկ է եղել՝ կազմելով 31.9%:
- Պետական բյուջեի ծախսերի աճը առաջանցիկ է եղել եկամուտների նկատմամբ և հանգեցրել պետական բյուջեի դեֆիցիտի:


1. Միջազգային զարգացումներ: Համաշխարհային տնտեսական ակտիվությունը հոկտեմբեր ամսին նախորդ ամսվա համեմատ տեղաշարժ չի գրանցել՝ պայմանավորված նոր ձեռնարկություններ թվի կրճատմամբ: Շարունակվել է ծառայությունների ոլորտի աճի դանդաղումը և արդյունաբերության ոլորտի անկումը, իսկ Եվրագոտու անդամ երկրները շարունակում են մնալ համաշխարհային տնտեսության թույլ կողմը: Մասնավորապես, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Մեծ Բրիտանիայում և Իռլանդիայում գրանցվել է անկում, իսկ Իսպանիայում՝ ստագնացիա: Մինդեռ տնտեսական ակտիվության փոփոխություն չի գրանցվել Չինաստանում: Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ում չնայած պահանջարկի փխրուն պայմանների՝ գրանցվել է մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտների աճ. վերջինիս աճը նպաստել է նաև զբաղվածության մակարդակի աճին: Իսկ ՌԴ-ում շարունակվում է աճ գրանցվել հոկտեմբեր ամսին մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտները գրանցել են նույնական աճի տեմպեր:

Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միտումները.



Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից շարունակվում է իրականացվել զսպող քաղաքականություն: ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը և Եվրոպական կենտրոնական բանկը գնաճի շարունակական նվազմանը զուգահեռ դեռևս պահպանում են քաղաքականության տոկոսադրույքի բարձր մակարդակը: ՌԴ կենտրոնական բանկը հիմնական տոկոսադրույքը սեպտեմբերին 13% սահմանելուց հետո, հոկտեմբերին սահմանել է 15%՝ պայմանավորված առկա գնաճային ճնշումներով, ներքին պահանջարկի աճով և վարկավորման բարձր աճի տեմպերով: Եվրոպական կենտրոնական բանկը և ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը շարունակում են իրականացնել զսպող դրամավարկային քաղաքականություն. ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը սեպտեմբեր ամսին քաղաքականության տոկոսադրույքը սահմանել էր՝ 5.5% և նույնբերին պահպանել միևնույն մակարդակում, իսկ Եվրոպական կենտրոնական բանկը սահմանել է վերանֆինանսավորման տոկոսադրույքը 22 տարիների ամենաբարձր մակարդակում՝ 4.5%:



Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարկային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում



Նավթի միջազգային գինը հոկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 3.1%-ով, իսկ պղնձի և մոլիբդենի գները նվազել են 4.1%-ով և 0.5%-ով: Նավթի գների աճը պայմանավորված է Սաուդյան Արաբիայի և Ռուսաստանի կողմից արդյունահանման լրացուցիչ կրճատումներով: Մյուս կողմից, գների վրա իր ազդեցությունն է ունեցել նաև Մերձավոր Արևելքում սկիզբ առած հակամարտությունը: Արդյունքում, հոկտեմբեր ամսին նավթի միջազգային գինը կազմել է 91.1 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.2%-ով: Պղնձի գինը կազմել է 7937.2 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց՝ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ աճելով 2.5%-ով: Մոլիբդենի միջազգային գինը օգոստոս ամսվա կտրուկ աճից հետո աստիճանաբար նվազում է. հոկտեմբեր ամսին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 0.5%-ով, իսկ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ աճել է 23.7%-ով: Մետաղների գների վրա ազդող հիմնական գործոնը շարունակում է մնալ Չինաստանի թույլ պահանջարկը, այժմ նաև մերձավոր արևելյան հակամարտությունը: Պարենի գինը նախորդ տարվա համեմատ նվազել է 10.9%-ով: Նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 0.5%-ով՝ պայմանավորված շաքարավազի, հացահատիկի, բուսական յուղի և մսի գների նվազմամբ:




Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ




2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2023թ. վերջին ամիսներին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի զգալի դանդաղում իսկ հոկտեմբերին այն կրկին արագացել է՝ հասնելով 14%-ի (նախորդ ամսվա աճը՝ 1.4%)՝ կազմելով 740.7 մլն դոլար, որին ամենամեծ նպաստումն է ունեցել դեպի ՌԴ արտահանումը: Ներմուծումն աճել է 22.4%-ով (նախորդ ամսվա աճը՝ 5.8%)՝ կազմելով 1172.8 մլն դոլար:

Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միջուկները, մլն դոլար




2023 թվականի հոկտեմբեր ամսին շարունակվում է արձանագրվել ՀՀ այցելած զբոսաշրջիկների աճի տեմպի դանդաղում՝ կազմելով 26.2% (նախորդ ամսվա աճը՝ 31.6%): Աճին ամենամեծ նպաստումն են ունեցել ՌԴ զբոսաշրջիկները: Հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների աճը կազմել է 46.3%:

Գծապատկեր 2.2. ՌԴ-ից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը




2023 թվականի հունվար-հոկտեմբերին ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շարունակել են նվազել (42%-ով)՝ հասնելով 759.9 մլն դոլարի, որը պայմանավորված է հիմնականում ՌԴ-ից փոխանցումների շուրջ 48.3 տոկոս (512.3մլն դոլար) նվազմամբ (նպաստումը՝ 36.5 տոկոսային կետ):

Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց փոխանցումների զուտ ներհոսքը




ՀՀ դրամը հոկտեմբերին շարունակել է արժևորվել ռուբլու նկատմամբ, իսկ դոլարի և եվրոյի նկատմամբ արձանագրվել է արժեզրկում: Այսպես, հոկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամը շուրջ 0.4%-ով արժեզրկվել է համեմատած նախորդ տարվա նույն ամսվա հետ: Մարտ ամսից նկատվում էր դրամի արժևորման տեմպի դանդաղում (բացառությամբ սեպտեմբեր ամսի): Եվրոյի նկատմամբ դրամը ևս արժեզրկվել է 7.3%-ով: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամը արժևորվել է 56.9%-ով (նախորդ ամիս՝ 72.5%):

Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ



3. ՀՀ տնտեսական զարգացումներ: 2023թ. հունվար-սեպտեմբերին գրանցվել է 9.2% տնտեսական աճ, որն ըստ առաջարկի՝ պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների (հատկապես՝ առևտրի և տեղեկատվություն և կապի) աճով, իսկ ըստ պահանջարկի՝ հիմնականում՝ արտահանման, ինչպես նաև մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների աճով:

Գծապատկեր 3.1. ՀՆԱ-ի իրական աճ (%) և նպաստումներ (տ.կ.)




Տնտեսական ակտիվության աճի տեմպը սեպտեմբեր ամսվա որոշակի դանդաղումից հետո հոկտեմբերին 0.7 տոկոսային կետով արագացել է (պայմանավորված է հիմնականում արդյունաբերության աճի տեմպի վերականգնմամբ և առևտրի աճի տեմպի արագացմամբ)՝ կազմելով 6.0%: Արդյունքում հունվար-հոկտեմբերին գրանցվել է ՏԱՑ-ի 9.2% աճ՝ հունվար-սեպտեմբերի նկատմամբ դանդաղելով 0.5 տոկոսային կետով:

ՏԱՑ-ի աճը հունվար-սեպտեմբերին պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների (ի հաշիվ տեղեկատվություն և կապի, տրանսպորտի, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման) աճով: Մյուս ճյուղերը (բացառությամբ՝ արդյունաբերության) նույնպես նպաստել են աճին: Ընդ որում՝ արդյունաբերության նվազումը պայմանավորված է եղել հիմնականում հիմնային մետաղների և սննդամթերքի արտադրության նվազմամբ, իսկ




ուկերչական, ծխախոտային արտադրատեսակների արտադրության և պոլիգրաֆիական գործունեության աճերը էականորեն հակազդել են արդյունաբերության նվազմանը: Շինարարության աճը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ պայմանավորված է եղել հիմնականում կազմակերպությունների և համայնքների միջոցներով իրականացված շինարարության աճով, ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտում շինարարության աճով, իսկ առևտրի աճը՝ հիմնականում մեծածախ առևտրի աճով:

Գծապատկեր 3.2. SU3 և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուրսակային, %)



Գծապատկեր 3.3. SU3 և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (դիսկրետ, %)




Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 16.1%-ով՝ կազմելով 263,021 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 10.4%-ով՝ կազմելով 198,613 դրամ, իսկ ոչ պետականում՝ 17.1%-ով՝ կազմելով 289,296 դրամ): Աշխատավարձի աճին հունվար-սեպտեմբերին հիմնականում նպաստել են առևտրի, մշակող արդյունաբերության, մշակույթ, զվարճություններ և հանգստի, ՏՏ, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպում ոլորտների աշխատավարձերի աճը: Իրական աշխատավարձը՝ 2.5% գնաճի պայմաններում հունվար-հոկտեմբերին աճել է 13.3%-ով:

Հունվար-սեպտեմբերին պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թիվը նվազել է 15.7%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել է շուրջ 5.7%-ով՝ կազմելով 716,374 մարդ՝ պայմանավորված հիմնականում մշակող արդյունաբերության, կացության և հանրային սննդի կազմակերպման, ՏՏ, մշակույթ, զվարճություններ և հանգստի, ինչպես նաև շինարարության ոլորտներում աշխատողների թվի աճով:

Երկրորդ եռամսյակում գործազրկության մակարդակը կազմել է 11.7%՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակի նկատմամբ նվազելով 1.3 տոկոսային կետով: Գործազուրկների թիվը նվազել է 5.5%-ով, զբաղվածների թիվն՝ աճել 6.0%-ով: Միաժամանակ, աշխատուժի առաջարկն աճել է 4.5%-ով:

Գծապատկեր 3.4. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (կուրսակային)




ՀՀ անշարժ գույքի շուկայում սեպտեմբեր ամսին գները շարունակել են աճել՝ դրսևորելով որոշակի արագացում: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը օգոստոսի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է 0.8-ից 2.3% շրջանակներում, իսկ նախորդ տարվա սեպտեմբեր ամսվա նկատմամբ՝ 5.3-ից 14.7% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1 ք.մ. մակերեսի հաշվարկով՝ 860,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1 քառ.


մ մակերեսի հաշվարկով՝ 218,000 դրամ): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը օգոստոսի համեմատ տատանվել է 0-ից 3.5% շրջանակներում, իսկ նախորդ տարվա սեպտեմբեր ամսվա նկատմամբ՝ 1.8-33.6%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ² մակերեսի հաշվարկով՝ 420,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Լոռվա մարզի Թումանյան քաղաքում (1 ք.մ. մակերեսի հաշվարկով՝ 25,000 դրամ):

4. Դրամավարկային քաղաքականություն: Հոկտեմբեր ամսին գնաճը շարունակել է 0-ին մոտ մակարդակում գտնվել: 12 ամսյա գնաճը կազմել է 0.1% (միջին գնաճը հունվար-հոկտեմբերին՝ 2.5%), մինչդեռ բնականոն գնաճը կազմել է 0%: Հոկտեմբերի 31-ին ԿԲ-ը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 9.5%:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը



Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ




12 ամսյա գնաճի մակարդակի ձևավորումը շարունակում է պայմանավորվել հիմնականում սննդամթերքի բացասական, և ծառայությունների գնաճի՝ դրական նպաստումների հակակշռմամբ, թեպետ վերջիններիս մեծությունները շարունակում են նվազման միտումը: Սննդամթերքի գնաճի նպաստումը կազմել է -1.2 տոկոսային կետ, մինչդեռ ծառայությունների գնաճը՝ թեպետ տարեսկզբի նկատմամբ շարունակաբար դանդաղում է, շարունակում է մնալ համեմատաբար զգալի՝ 2.9%, շարունակելով դրական նպաստում ունենալ գնաճին 0.9 տոկոսային կետի չափով: Ծառայությունների գնաճը հիմնականում արտացոլում է որոշ չափով պահպանվող պահանջարկի ճնշումները:

5. Ֆինանսական միջնորդություն: Հոկտեմբերին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ, որին նպաստում է 2022թ.-ի կեսերից բանկային համակարգում կուտակված լրացուցիչ իրացվելիությունը: Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա և այս տարվա առաջին կեսի, երբ ավանդների ծավալների աճը զգալիորեն գերազանցում էր վարկերի ծավալների աճին, ներկայումս դրանք նույնական տեմպերով են աճում (ռեզիդենտների ավանդները և ռեզիդենտների վարկերը՝ 22.1%): Միաժամանակ, վարկերի աճն ըստ ոլորտների առավել ընդգրկուն է դարձել (չնայած որ ամենաբարձր նպաստումը շարունակում են ապահովել հիպոթեքային և սպառողական վարկերը)՝ ներառելով նաև տնտեսության ոլորտների (բացառությամբ՝ արդյունաբերության) վարկավորման ավելի բարձր աճի տեմպեր: Իսկ ավանդների և վարկերի դրական տարբերությունը, որը վերջին 2 տարիների ընթացքում էականորեն բարձրացել է և ապահովում է զգալի իրացվելիության բարձր, սկսել է աստիճանաբար փոքրանալ, սակայն շարունակում է գտնվել




պատմականորեն բարձր մակարդակում՝ մասամբ պայմանավորված նաև ոչ ռեզիդենտների ավանդների պահպանվող բարձր ցուցանիշով (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր շուրջ 461 մլրդ դրամով):

Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %




ՀՀ ֆինանսական շուկայում առավել ճկուն տոկոսադրույքները (միջբանկային ռեպո, պետական պարտատոմսեր) նվազման միտում ունեն, մինչդեռ առավել կոշտ տոկոսադրույքները (վարկեր, ավանդներ)՝ շարունակում են պահպանվել իրենց միջին մակարդակներում: Պետական պարտատոմսերի եկամտաբերությունների համար շարունակում է վճռորոշ գործոն մնալ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը, իսկ վարկերի և ավանդների տոկոսադրույքները շարունակում են արտացոլել առավել հիմնարար տնտեսական գործոնները՝ հիմնականում տատանվելով իրենց միջին մակարդակների շրջակայքում: Բացառություն են հիփոթեքային և սպառողական վարկերը, որոնց տոկոսադրույքների աճը շարունակվում է դրանց նկատմամբ բարձր պահանջարկի ազդեցությամբ:

Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %




6. Հարկաբյուջետային հատված: Հարկային եկամուտները շարունակել են աճել բարձր տեմպերով: 2023թ.-ի հոկտեմբերին հարկային եկամուտները կազմել են 176.6 մլրդ դրամ, կամ 2022թ.-ի հոկտեմբերի ցուցանիշից ավելի 15.1%-ով: Հունվար-հոկտեմբեր ամիսներին հարկային եկամուտները կազմել են 1793.6 մլրդ դրամ, կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածից ավելի 15.0%-ով:

Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %




Շահութահարկը և ավելացված արժեքի հարկը շարունակել են լինել հարկային եկամուտների աճը պայմանավորող հիմնական աղբյուրները՝ 5.6%-ային կետ և 5.5%-ային կետ մասնակցությամբ: Միաժամանակ, զգալի է նաև եկամտային հարկի դերը, որը հարկային եկամուտների աճին նպաստել է 3.7%-ային կետով: Բացասական նպաստում են ունեցել պետական տուրքերը, ինչը պայմանավորված է մետաղական հանքաքարի համար ժամանակավոր ներմուծված արտահանման տուրքի չեղարկմամբ և բնապահպանական և բնօգտագործման վճարներով:

Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կերպ



Պետական բյուջեի ծախսերի աճը առաջանցիկ է եղել եկամուտների նկատմամբ և հանգեցրել պետական բյուջեի դեֆիցիտի: Ընդհանուր առմամբ, հունվար-հոկտեմբեր ամիսներին պետական բյուջեն ունեցել է 1895.4 մլրդ դրամի եկամուտներ (նախորդ տարվա հունվար-հոկտեմբերի համեմատությամբ ավելի 14.0%-ով), և կատարել 1914.4 մլրդ դրամի ծախսեր՝ նախորդ տարվա հունվար-հոկտեմբերի համեմատությամբ ավելի 14.3%-ով: Նշված ծախսերը ընդգրկել են 1647.5 մլրդ դրամի ընթացիկ, և 266.9 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ, որոնք նախորդ հունվար-հոկտեմբերի համեմատությամբ ավելի են համապատասխանաբար 11.8 և 32.6 տոկոսներով:

Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Պետական բյուջեի դեֆիցիտը փոքր-ինչ բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Հոկտեմբերի զարգացումները արտացոլում են դեֆիցիտային բյուջե՝ եկամուտների մակարդակին 93.6 մլրդ դրամով գերազանցող ծախսեր: Արդյունքում, 2023թ.-ի հունվար-հոկտեմբեր ամիսների դեֆիցիտը կազմել է 19.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 13.0 մլրդ դրամ և 2023-ի հունվար-սեպտեմբեր ամիսների 74.6 մլրդ դրամ հավելուրդային ցուցանիշի նկատմամբ: